[ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ]

Ամուսնությունը հին Եգիպտոսում

Եգիպտագիտության
հայկական կենտրոն

Երեւան 2015

ՀՏԴ 93/94(32):392.5
ԳՄԴ 63.3(0)31+63.5
Ա 537

Հավաքեց, թարգմանեց եւ կազմեց՝
Աշխեն Զախարյան

Խմբագրեց եւ սրբագրեց՝
Ռուզան Շահվերդյան,
Արմինե Առաքելյան

Ա 537 Ամուսնությունը հին Եգիպտոսում/ Հավաքեց, թարգմանեց եւ կազմեց՝ Աշխեն Զախարյան. -Եր., ԵՊՀ հրատ., 2015.- 68 էջ:

Գիրքը ներկայացնում է ամուսնությունը հին Եգիպտոսում, ամուսինների իրավունքները, ծննդաբերությունը, դիվանագիտական ամուսնությունները, մենամուսնությունն ու բազմամուսնությունը, ինչպես նաեւ արյունակցական ամուսնությունները:

ՀՏԴ 93/94(32):392.5
ԳՄԴ 63.3(0)31+63.5

ISBN 978-5-8084-1959-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Կազմողի համար, 2015

Չափսը՝ 60x84/16: Տպ. մամուլը՝ 4.25
Տպաքանակը՝ 200

ԵՊՀ հրատարակչություն
Ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

Միջերկրական ծով
Ալեքսանդրիա
Կահիրե
ՍԻՆԱԻ
ԵԳԻՊՏՈՍ
Կարմիր ծով
Նեղոս գետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժամանակագրություն 6

Ծանոթություն 10

Ամուսնության տարիք.....12

Ամուսնական իրավունքներ եւ պարտականություններ 14

Հղիություն եւ ծննդաբերություն 24

Միջպետական՝ դիվանագիտական ամուսնություններ 30

Արյունակցական ամուսնություններ եւ հայտնի
փարավոններ.....38

Ընտանիքի, պտղաբերության ու ծննդաբերության հետ
կապված աստվածներ եւ աստվածուհիներ 58

Գրականության ցանկ 68

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախադինաստիական – (4500-3150)

Զրո դինաստիա – (3150-3030)

Վաղ դինաստիական – (3030-2650)

Հին թագավորություն – (2650-2040)

3-րդ դինաստիա – 2650-2575

4-րդ դինաստիա – 2575-2465

5-րդ դինաստիա – 2465-2323

6-րդ դինաստիա – 2323-2152

8-րդ դինաստիա – 2150-2040

1-ն միջանկյալ ժամանակաշրջան

9/10-րդ դինաստիա – 2134-2040

Միջին թագավորություն - (2010-1640)

11-րդ դինաստիա – 2010-1991

12-րդ դինաստիա – 1991-1783

13-րդ դինաստիա – 1783-1640

2-րդ միջանկյալ ժամանակաշրջան (Հիքսոսներ) (1640-1550)

14-րդ դինաստիա

15-րդ դինաստիա

16-րդ դինաստիա

17-րդ դինաստիա

Նոր թագավորություն (1550-1069)

18-րդ դինաստիա

Ահմոս (Նեբփեհթիրա) – 1550-1525

Ամենհոթեփ I (Ջեսերքարա) – 1525-1504

Թութմոս I (Աախեփերքարա) – 1504-1492

Թութմոս II (Աախեփերենրա) – 1492-1479

Թութմոս III (Մենխեփերրա) – 1479-1425

Հաթշեփսութ (Մաաթքարա), Փարավոնուհի – 1473-1458

Ամենհոթեփ II (Աախեփերուրա) – 1427-1401

Թութմոս IV (Մենխեփերուրա) – 1401-1391

Ամենհոթեփ III (Ներմաաթրա) – 1390-1352

Ամենհոթեփ IV/Ախենաթեն (Նեֆերխեփերուրա Ուաենրա) – 1352-1336

Սմենխքարա (Անխ խեփերուրա) – 1338-1336

Թութանխամոն (Նեբխեփերուրա) – 1336-1327

Այ (Խեփերխեփերուրա) – 1327-1323

Հորեմհեբ (Ջեսերխեփերուրա) – 1323-1295

19-րդ դինաստիա

Ռամզես I (Մենփեհիրա) – 1295-1294

Սեթի I (Մենմաաթրա) – 1294-1279

Ռամզես II (Ուսերմաաթրա Սեթեփենրա) – 1279-1213

Մերենփթահ (Բաենրա Հոթեփհերմաաթ) – 1213-1203

Ամենմեսսե (Մենմիրա) – 1203-1200

Սեթի II (Ուսերխեփերուրա Սեթեփենրա) – 1200-1194

Սիփթահ (Ախենրա Սեթեփենրա) – 1194-1188

Թաոսրեթ (Սիթրա Մերիթամեն) – 1188-1186

20-րդ դինաստիա

Սեթնախթե – 1186-1184

Ռամզես III – 1184-1153

Ռամզես IV – 1153-1147

Ռամզես V – 1147-1143

Ռամզես VI – 1143-1136

Ռամզես VII – 1136-1129

Ռամզես VIII – 1129-1126

Ռամզես IX – 1126-1108

Ռամզես X – 1108-1099

Ռամզես XI – 1099-1069

3-րդ միջանկյալ ժամանակաշրջան (1069-664)

21-րդ դինաստիա

22-րդ դինաստիա

23-րդ դինաստիա

24-րդ դինաստիա

25-րդ դինաստիա (Քուշի փարավոնների)

26-րդ դինաստիա

Ուշ ժամանակաշրջան (Սաիս) (664-343)

27-րդ դինաստիա (պարսկական)

28-րդ դինաստիա

29-րդ դինաստիա

30-րդ դինաստիա

Պարսկական երկրորդ ժամանակաշրջան (343-332)

Մակեդոնյան ժամանակաշրջան - 332-304

Պտղոմեյան - 304- 30

Հռոմեական - մ.թ.ա. 30 - մ.թ. 395

Բյուզանդական ժամանակաշրջան - 395-641

Իսլամական ժամանակաշրջան - 641- մինչեւ մեր օրեր

Ժամանակագրությունը պայմանական է: Օգտագործվել է Կալիֆորնիայի համալսարանի (Լոս Անջելես) կազմած ժամանակագրությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ինչպես մյուս բոլոր մշակույթներում, այնպես էլ հին Եգիպտոսում ամուսնությունն ու ընտանիքը կարեւոր տեղ են զբաղեցնում, որը հասարակական կարեւորագույն ինստիտուտներից էր:

Յուրաքանչյուր ազատ մարդ՝ հարուստ թե աղքատ, իրավունք ուներ ամուսնանալու: Ամուսնությունը ո՛չ կրոնական խնդիր էր, ո՛չ էլ՝ պետական, եւ պսակադրությունը չէր իրականացվում քրմի կողմից: Ուղղակի կողմերը համաձայնության էին գալիս, եւ այն ամրագրում ամուսնական պայմանագրերում: Ամուսնությունն ավելի աշխարհիկ բնույթ ուներ, որին չէին խառնվում անգամ պետական մարմինները: Ոչ մի վկայություն չկա այն մասին, որ ամուսնություններն ուղեկցվել են որոշակի արարողություններով: Գիտնականները կարծում են, որ պայմանագրի բացակայության դեպքում ուղղակի համաձայնության են եկել սեփականության հարցում, որը հիմնված է եղել հասարակական սովորույթների եւ օրենքով հաստատված իրավունքների վրա: Նման համաձայնագրերը կոչված էին պաշտպանելու ամուսինների իրավունքներն ամուսնալուծության դեպքում:

Նախքան ամուսնական պայմանագրերի ի հայտ գալը, որոնք հստակ պատկերացում են տալիս ամուսնական կյանքի մասին, կարծիք կա, որ հիմնականում տղամարդն աշխատում էր դրսում, իսկ կինը՝ ներսում: Եւ այդ պայմանագրերից երեւում է, որ ամուսնական կյանքի ընթացքում նրանցից յուրաքանչյուրն ուներ իր իրավունքներն ու պարտականությունները:

Ամուսնությունները սովորաբար տեղի էին ունենում նույն սոցիալական կարգավիճակն ունեցող ընտանիքների միջեւ: Ազատ մարդու եւ ստրուկի միջեւ ամուսնությունն ավելի շատ դիտվում էր որպես ամուսնություն հարճի հետ եւ իրավական պաշտպանվածություն չէր ենթադրում: Այդպիսի կապից ծնված երեխան նույնպես ստրուկ էր համարվում: Որպեսզի ստրուկ կինն օրինական ամուսնական պայմանագիր կնքեր, նա առաջին հերթին պիտի գներ իր ազատությունը կամ որդեգրվեր ազատի կողմից: Տղամարդն իրավունք ուներ որդեգել ստրուկից ունեցած իր երեխաներին:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔ

Ամուսնական պայմանագրերում միշտ չէ, որ նշվում է ամուսնացողների տարիքը: Հայտնի չէ՝ ամուսնությունից առաջ արդյո՞ք նրանք նշանվել են, թե՝ ոչ: Կարծիք կա, որ համեմատաբար վաղ ժամանակներում աղջիկների ամուսնության տարիքը եղել է 12-13 տարեկանը, իսկ տղաներինը՝ 14-ը: Ենթադրվում է, որ սեռական հասունությունը եղել է ամուսնության նախապայմաններից մեկը:

Պտղոմեյան շրջանի մի փաստաթղթում հարս ու փեսայի ամուսնության ամենացածր տարիքը, որ բերվում է, 15-ն է: Պտղոմեյան ժամանակաշրջանով թվագրվող Անխ-Շեշոնքի վարքականոնում տղաներին խորհուրդ է տրվում ամուսնանալ 20 տարեկանում, որպեսզի, քանի դեռ երիտասարդ են, կարողանան երեխաներ ունենալ: Ըստ հին եգիպտացիների՝ ամուսնության ամենաճիշտ տարիքն այն է, երբ մարդը ֆիզիկապես պատրաստ է դրան եւ արդեն հասել է որոշակի հաջողությունների: Փթահ-Հոթեփը (Հին թագավորության 5-րդ դինաստիայի վեզիր, առաջին նախարար) իր՝ «Փթահ-Հոթեփի խրատները» ստեղծագործության մեջ, որը մեծ թվով գիտնականներ համարում են պատմության մեջ առաջին գիրքը, գրում է. «Եթե դու արդեն անուն ես հանել, սկսիր ընտանիք ստեղծել»: Օրինակ, Դեյր էլ-Մեդինայի գրագիր Քենհերխեպեշեֆը 54 տարեկանում ամուսնացել է 12 տարեկան Նանախթի հետ:

Մութնոջմեթ թագուհու մահվան տարիքը պարզելուց հետո, ենթադրվում է, որ գեներալ Հորեմհեբը (նկ. 1) 50 տարեկանում ամուսնացել է 25-30 տարեկան Մութնոջմեթի հետ: Սա շահ հետապնդող ամուսնության դասական օրինակ է, որը հնարավորություն տվեց Հորեմհեբին զբաղեցնելու եգիպտական գահը: Նա 18-րդ դինաստիայի վերջին փարավոնն էր:

Պապիրուսագետ Փ. Փեսթմանը հռոմեական շրջանից մի քանի փաստաթղթեր է վկայակոչում, որոնցում աղջիկների ամուսնության տարիքը 8, 9 կամ 10-ն է: Աղջիկների պարագայում այլ էր, կարիք չկար սպասելու մինչեւ որոշակի սոցիալական դիրքի հասնելը:

Նկ. 1. Հորեմհեբ փարավոն

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամուսինն ուներ միայն մեկ օրինական կին, որն էլ նրա ժառանգների մայրն էր:

Կին որոշ գիտնականներ գտնում են, որ հիմնականում ընդունված էր մենամուսնությունը, բայց չէր արգելվում նաեւ բազմամուսնությունը: Այլ գիտնականներ համարում են, որ անգամ հասարակ մարդիկ կարող էին մեկից ավելի կին ունենալ: Ոմանք էլ կարծում են, որ բազմամուսնությունը՝ պոլիգամիան, շատ տարածված է եղել: Եթե ամուսինը շատ հարուստ էր, կարող էր իրեն թույլ տալ նաեւ հարճ ունենալ, բայց գերապատվությունը միշտ տրվում էր հիմնական կնոջը, եւ հարճերը որեւէ իրավունք չունեին: Կարելի է ասել, որ ամուսնու պարտականություններն իր կնոջ նկատմամբ գտնվում էին օրենքի եւ բարոյականության դաշտում: Օրինակ, Պթահ-Հոթեփի խրատներում ասվում է. «Երբ դու հարստանաս, առաջադիմես, ստեղծես քո ընտանիքը եւ քո կնոջը շատ սիրես, կերակրես, հագցնես, անուշահոտ յուղով մերսես նրա մարմինը, շահես, ուրախացնես նրա սիրտը այնքան ժամանակ, քանի դեռ ողջ ես, նա կլինի բերրի հող իր տիրոջ համար»:

Ամուսնության համար անհրաժեշտ էր երկու կողմերի համաձայնությունը: Նոր թագավորության ժամանակաշրջանում ամուսնության մասին որոշումը կայացվում էր տղայի եւ աղջկա հոր միջեւ՝ առանց աղջկան հարցնելու: Եթե հայրը մահացած էր, իր համաձայնությունը կարող էր տալ աղջկա մայրը կամ էլ՝ քեռին: Իսկ 26-րդ դինաստիայի ժամանակաշրջանին վերաբերող ամուսնական պայմանագրերը պարունակում են ոչ միայն այնպիսի կետեր, ինչպիսիք են՝ «Ես քեզ դարձրեցի իմ կինը», այլ նաեւ՝ «Դու ինձ դարձրեցիր քո կինը»: Այսինքն, հոր համաձայնությունն արդեն անհրաժեշտ չէր: Կարելի է ասել, որ եթե նախկինում համաձայնության էին գալիս հարսի հայրը եւ ապագա ամուսինը, ապա ամենաուշը 26-րդ դինաստիայից սկսած, կարեւոր էր միայն ամուսնացողների համաձայնությունը:

Նկ. 2. Նիքարաև (հացահատիկի ամբարների վերահսկիչ) եւ նրա ընտանիքը, 5-րդ դինաստիա

Ամուսնությունն օրինականացնելու հաջորդ քայլն այսպես ասած ընդունման (այն, ինչ կինն է տալիս ամուսնուն) եւ հանձնման (այն, ինչ ամուսինն է տալիս կնոջը) գրավոր ակտն է: Առաջին դեպքում ակտում գրանցվում է ամուսնու եւ կնոջ համաձայնությունը, որտեղ կինն ամուսնուն որոշակի գումար է տալիս նրա կինը դառնալու համար: Իսկ երկրորդ տիպի փաստաթղթերի խումբը սահմանում է ամուսնալուծության հետեւանքով առաջացած խնդիրների՝ երեխաների ժառանգության, սեփականության բաժանման կարգը:

Ամուսնալուծության ժամանակ, եթե կինը պահանջեր այն գումարը, որը տվել էր ամուսնանալիս, ամուսինը պարտավոր էր այն ետ վերադարձնել: Գումարը պահանջելուց 30 օր անց, ամուսինը պետք է գումարը վերադարձներ արդեն նախկին կնոջը: Գիտնականներից ոմանք կարծում են, որ այս տիպի գործարքներն անհրաժեշտ էին օրինական ընտանիք ստեղծելու համար: Ըստ ամենայնի, ամուսիններն իրար գումար եւ տարբեր իրեր փոխանցելով՝ գնում եւ վաճառում էին իրենք իրենց՝ այդպիսով դառնալով մեկը մյուսի սեփականատերը: Հաուսվալդթի պապիրուսում (Ընտանեկան իրավունքին վերաբերող փաստաթուղթ, մ.թ.ա. 3-րդ դար, Էդֆու) պահպանվել է նման մի պայման. «Ես կտամ քեզ (գումար) բացի նրանից (գումար, որն արդեն նշված է ցուցակում) ինչ ես քեզ տվել եմ որպես քո ամուսին /sp n s.hm.t/ ... եւ կտամ քեզ այն ամենի 1/3 (մասը), ինչ կունենանք մեր համատեղ կյանքում՝ այս օրվանից սկսած»: Ամուսինը կնոջը նաեւ նվերներ էր տալիս, սովորաբար՝ արծաթ, երբեմն էլ արծաթի հետ տալիս էր որոշ քանակությամբ հացահատիկ: Ամուսինը նվերները հանձնում էր այն ժամանակ, երբ հայրը նրան կնության էր տալիս իր աղջկան: Որոշ գիտնականներ ենթադրում են, որ գումարը վճարվում էր հորը՝ որպես «գին կամ փոխհատուցում աղջկա հետ ամուսնանալու համար»: Ամուսինը վճարելով (sp) իրավունքներ էր ձեռք բերում կնոջ նկատմամբ եւ դառնում նրա սեփականատերը:

Ինչպես ամուսնությունը, այնպես էլ ամուսնալուծությունը ո՛չ պետական, ո՛չ կրոնական բնույթ չէին կրում՝ չնայած դատավորը կարող էր որպես վկա հանդես գալ ամուսնությունը լուծելու ժամանակ:

Եթե բանը հասնում էր ամուսնալուծության, ապա ամուսինների համատեղ կյանքն ավարտվում էր: Ամուսնական տունը սովորաբար պատկանում էր տղամարդուն, հետեւաբար ամուսնալուծության դեպքում հիմնականում կինն էր հեռանում տնից. «Դու կմնաս իմ տանն այնքան ժամանակ, քանի դեռ դու ինձ հետ ես որպես կին...»: Պապիրուսագետ Փեսթմանը նշում է, որ ամուսնալուծությունն արգելված չէր հին Եգիպտոսում եւ երկու կողմն էլ կարող էր այն նախաձեռնել: Հին եգիպտական հասարակությունում ամուսնալուծված կնոջը կամ տղամարդուն շատ բնական էին վերաբերվում: Շատ քիչ վկայություններ կան այն մասին, որ նրանք ամուսնալուծությունից հետո կրկին չեն ամուսնացել, մեծամասամբ ամուսնանում էին ու նոր ընտանիք կազմում: Ով նախաձեռնում էր ամուսնալուծությունը, նա էլ որոշակի փոխհատուցում էր տալիս «տուժած» կողմին. «Եթե ես հրաժարվեմ քեզնից որպես ամուսին, դրա պատճառը լինի այն, որ ես քեզ ատում եմ կամ ուզում եմ մեկ ուրիշին, այլ՝ ոչ քեզ, ես քեզ կտամ 2 ½ քեդեթ (արծաթ ու ոսկի կշռելու միավոր) արծաթ»: Պետք է նշել, որ ամեն դեպքում տղամարդն ավելին էր վճարում, քան կինը, եթե անգամ վերջինս էր նախաձեռնել ամուսնալուծությունը: Տղամարդը, մինչեւ նոր ամուսին գտնելը, պարտավոր էր գումարով ապահովել կնոջը, ինչպես նաեւ ալիմենտ վճարել իր երեխաների համար: Փեսթմանը փաստում է, որ տղամարդու՝ իր կնոջից բաժանվելու իրավունքն առաջին անգամ արձանագրված է Փթահ-Հոթեփի խրատներում, իսկ կնոջ իրավունքն առաջին անգամ հիշատակվում է մ.թ.ա. 500 թվականի մի փաստաթղթում: Բայց փաստ է այն, որ Եգիպտական օրենքը կնոջն անկախ մարդ էր համարում, եւ պետք է ենթադրել, որ կնոջ կողմից բաժանություն նախաձեռնելը կարող էր տեղի ունենալ նաեւ ավելի վաղ ժամանակներում: Թե ինչն էր հիմք դառնում ամուսնալուծության համար, այնքան էլ հստակ չէ, բայց դավաճանությունն ու ամլությունը երկու ամենահիմնավոր պատճառներից էին: Հետագայում, Անխ-Շեշոնքի վարքականոնում խորհուրդ էր տրվում չբաժանվել ամուլ կնոջից: Սակայն, կարող էին ամուսնալուծության այլ պատճառներ եւս լինել: Օրինակ, եթե ամուսինը կնոջը ծեծում էր

եւ արդեն չափն անցել էր, ու կնոջ համբերության բաժակը լցվել էր, ապա նա իրավունք ուներ ամուսնուն դատի տալ եւ խնդրել բաժանել իրենց: Պապիրուսներում արձանագրված է մի դեպք, որտեղ կինը ֆիզիկական բռնությունների է ենթարկվել ամուսնու կողմից եւ դատի տվել ամուսնուն, իսկ որպես վկա հանդես է եկել նրա սկեսուրը: Սովորաբար ամուսինները համաձայնության էին գալիս այդ հարցի շուրջ: Օրինակ, ամուսինը համաձայն էր, որ «Եթե ես երբեւէ նորից Թեներ-Մոնքոի դստերն անարդարացիորեն վիրավորեմ, թող մտրակի 100 հարված ստանամ եւ զրկվեմ այն ամենից, ինչ ձեռք ենք բերել համատեղ կյանքում»: Ամուսնալուծության պատճառ կարող էր լինել նաեւ հաշմանդամությունը. «Ես հրաժարվում եմ քեզնից, քանի որ քո մի աչքը կույր է», չսիրելը. «Ես քեզ կնության եմ առել ... եթե քեզնից հրաժարվեմ որպես կին, դա կնշանակի, որ ես քեզ ատում եմ, որ ես քո փոխարեն այլ կին եմ ուզում ...»:

Ստույգ հայտնի չէ, թե ամուսնալուծությունից հետո երեխաներն ու՞մ մոտ էին մնում, ո՞վ էր հոգում նրանց դաստիարակության հարցերը: Ինչեւէ, ընդունված է այն տարբերակը, որ երեխաները մնում էին մայրերի խնամակալության ներքո:

Տղամարդու ձեռքին էր աղջիկ երեխայի ապրելու իրավունքը: Հայրն էր որոշում, պե՛տք էր պահել աղջիկ երեխային, թե՝ ոչ: Անցանկալի երեխաներին ծնվելուց հետո դնում էին աղբի մեջ:

Ամուսիններն ունեին երեք տիպի սեփականություն՝

1. Ամուսնու անձնական սեփականություն՝ ստացած իր ծնողներից:
2. Կնոջ անձնական սեփականություն՝ ստացած իր ծնողներից:
3. Ամուսինների համատեղ ստեղծած սեփականություն:

Ամուսնու մահից հետո, սեփականության 1/3-ը պատկանում էր կնոջը, 2/3-ը՝ երեխաներին: Այստեղից կարելի է ենթադրել, որ ամուսինն ու կինն իրարից չէին ժառանգում, պարզապես յուրաքանչյուրը ստանում էր իր հասանելիք 1/3-ը:

Պապիրուսներում կարելի է հանդիպել որդեգրման պատմություններ, որտեղ ամուսինը որդեգրում է իր կնոջը: Հաճախ, երբ ընտանիքում երեխա չէր ծնվում, ամուսինը որդեգրում էր իր կնոջը, որպեսզի ժառանգությունը նրան թողներ: Որդեգրման պապիրուսներից մեկում նմանատիպ վկայություն կա. «Նեբնեֆերը՝ իմ ամուսինը, գրել է, որ ինձ՝ Նենեֆերիս դարձնում է իր երեխան եւ ժառանգում իր ողջ ունեցվածքը, քանի որ զավակներ չուներ»: Չնայած, կարող էին կնոջը որդեգրել նաեւ երեխաների առկայության դեպքում եւ ողջ ունեցվածքը թողնել նրան: Արդյունքում՝ կինը կժառանգեր իրենց համատեղ կյանքում ստեղծածի 2/3-ը եւ օրենքով իրենը համարվող ունեցվածքի 1/3-ը: Բայց, որպեսզի ամբողջ ունեցվածքն անցներ կնոջը, անհրաժեշտ էին այդ մասին վկայող համապատասխան փաստաթուղթ եւ վկաներ:

Առանց որդեգրելու էլ ամուսինը կարող էր ունեցվածքի իր մասը թողնել կնոջը, եթե իր կամքը, վկաների ներկայությամբ, փաստաթղթով հաստատված լիներ: Նման դեպքի նկարագրություն պահպանվել է, օրինակ, Միջին թագավորությանը վերաբերող Քահուն I պապիրուսում, որը կազմվել էր ոմն Ուահի կողմից: Այստեղ ասվում է, որ ինքն իր եղբորից ժառանգած ունեցվածքը փոխանցում է իր կնոջը՝ Թեթիին: Ենթադրվում է, որ նրանք երեխաներ չեն ունեցել, քանի որ տեքստում նաեւ ասվում է, որ իր կինը՝ Թեթին, այն կարող է տնօրինել ըստ իր ցանկության:

Բ. Վատերսոնը վկայում է, որ պահպանված կտակներից մեկում ամուսինը կնոջը թողել է 15 ստրուկ, որպես ընդհանուր ունեցվածքի կնոջ հասանելիքի 1/3 մաս: Մ.թ.ա. 1900 թ.-ին երկու եղբայր նույնպես կտակ են գրել (Քահուն I պապիրուս), որտեղ ավագ եղբայրը՝ Անխրենը, ոչ թե ժառանգությունը թողել է կնոջը կամ երեխաներին, այլ՝ կրտսեր եղբորը: Իսկ հինգ տարի անց, եղբայրը Անխրենից ստացած ժառանգությունը, այդ թվում նաեւ տունը, կտակել է իր կնո-

ջը: Մեկ այլ կտակում տեսնում ենք, որ հայրն իր ունեցվածքը կտակել է կնոջը եւ որդուն: Նշվում է նաեւ, որ նրանք էլ իրենց հերթին, այդ ժառանգությունը փոխանցել են դստերը, քանի որ վերջինս հանձն է առել մոր խնամակալությունը ծերության օրոք: Փաստորեն կարելի է ասել, որ միանշանակ չէր, թե ով պիտի ժառանգ լինի, կախված հանգամանքներից, կարող էին իրենց ունեցվածքը կտակել կնոջը, երեխային, եղբորը կամ այլ բարեկամների: Չնայած այս դեպքում կտակը պետք է անպայման հաստատված լիներ «թղթի» վրա, այլապես այն կբաժանվեր ըստ օրենքով նախատեսված կարգի:

Եթե ժառանգության հարցի շուրջ վեճեր էին ծագում, դիմում էին փարավոնական օրենքին, որն ասում էր. «Թող ունեցվածքը տրվի նրան, ով թաղել է»: Օրենքով ե՛ւ դուստրը, եւ՛ որդին ժառանգելու իրավունք ունեին, բայց նրանք կարող էին զրկվել այդ իրավունքից, եթե չմասնակցեին ծնողների հուղարկավորությանը: Ըստ մի փաստաթղթի՝ որդին պահանջում է ամբողջ ժառանգությունը (Բուլաք X պապիրուս), որովհետեւ ինքն էր հուղարկավորել իր մորը, առանց մյուս քույր ու եղբայրների օգնության: Օրենքն ասում է. «... երեխաները պարտավոր են հուղարկավորել իրենց ծնողներին, որպեսզի ժառանգելու իրավունք ստանան»: Բուլաք X պապիրուսի թարգմանության մեջ ներկայացված է. «Առարկաների ցուցակ ... որոնք տվել է տիկին Թգեմիին՝ իր մորը. 1 դագաղ, որն արժեր 40 դեբեն (հին Եգիպտոսում պղնձի, ոսկու, արծաթի կշռաչափ, որով որոշվել է նաեւ ապրանքի գինը) եւ մյուսը Հույնուֆի՝ հոր համար: Բայց արի ու տես, որ տիկին Թգեմիի երեխաները վիճարկում են այդ հարցը՝ պահանջելով նրա ժառանգությունը: Բայց նրանք չեն, որ թաղել են իրենց հորն ու մորը, եւ ունեցվածքը դեռ այդ կնոջ սեփականությունն է: Փարավոնական օրենքն ասում է. «Սեփականությունը տալ նրան, ով հուղարկավորել է»:

Հին թագավորության մի փաստաթղթում գրված է, թե ինչպես մի կին ամուսնու մահից հետո ժառանգությունը պահանջելու հարցում հաջողություն ունեցավ. «Առաջին տարին, ամառվա երկրորդ ամիսը, վերջին օրը: Այդ օրը Սիթիզենես

Իսիսը բողոքեց բանվոր Խաեմիփեթի, բանվոր Խաեմոասթի եւ բանվոր Ամոն-Նախթի դեմ՝ ասելով. «Տվեք ինձ իմ ամուսնու՝ Փանախթի ունեցվածքը»: Եւ դատարանը, հաշվի առնելով բոլոր անդամների կարծիքը, ասաց. «Նա ճիշտ է»: Այդպիսով, նա ստացավ իր ամուսնու սեփականությունը»: Փաստորեն դեռ Հին թագավորության ժամանակաշրջանում կինը կարող էր եւ ժառանգել, եւ՛ կտակել, եւ՛ ժառանգությունից զրկել, եւ՛ դատարան դիմել, անգամ գործը շահել: Հետաքրքիր է նաեւ իմանալ, թե հին Եգիպտոսում ինչ սեփականություն կարող էին ունենալ կինն ու տղամարդը: Սեփականություն ձեռք բերելու տարբեր ճանապարհներ կային: Օրինակ՝ սեփականությունը կարող էր նվեր լինել, կարող էին ժառանգություն ստանալ, աշխատել եւ սեփականություն կուտակել կամ էլ պարտքով վերցնել ուրիշից: Այս բոլորը վերաբերում էր եւ՛ կնոջը, եւ՛ տղամարդուն: Կինը, լիներ ամուսնացած թե ամուրի, կարող էր իր ունեցվածքին վերաբերող գործարքներ կնքել: Գործարքը վավեր համարվելու համար ամուսնու միջամտության կարիքը չկար, եթե, իհարկե, խոսքը չէր վերաբերում ամուսնու սեփականությանը: Սեփականության հարցերին նվիրված փաստաթղթերում պարբերաբար հանդիպում են կանանց կողմից իրենց ունեցվածքը տնօրինելու օրինակներ՝ վաճառել, ժառանգել, վարձով տալ եւ այլն: Օրինակ, Վիլբուրի պապիրուսում նշված է 131 կին հողատերերի մասին, որոնք նույնքան հողատարածք ունեին, որքան տղամարդիկ: Կանայք տղամարդկանց նման ունեին եւ՛ շարժական եւ եւ՛ անշարժ գույք՝ տուն, հող, կենդանի, ստրուկ եւ այլն, որոնք կարող էին գնել, վաճառել, վարձով տալ, ժառանգել:

Հին Եգիպտոսում իրավական պայմանագիր ասելով հասկանում էին այն, ինչ մենք՝ այսօր: Դրանք, ինչպես այսօր, կազմվում էին երկու օրինակից, երբեմն՝ անգամ երեք օրինակից: Պայմանագրում նշվում էր թագավորի գահակալման տարին, ամիսը, այնուհետեւ՝ ապագա կնոջ ու ամուսնու, նրանց ծնողների եւ քրմի եկեղեցական աստիճանը (օրինակ, տվյալ դեպքում՝ Կարնակի Ամոնի տաճարի ավելի ցածր աստիճան ունեցող քուրմ՝ Փասթոֆորոս):

Ահա պայմանագրի մի օրինակ.

«Դու ինձ դարձրեցիր քո կինը, տվեցիր 5/10 մաս արծաթ՝ մոտ 10 դրահմա /այսինքն՝ մոտ 2 դոլար/ (2¹/² հունական արծաթ կամ ոսկի), կրկնում եմ 5/10 մաս արծաթ՝ որպես իմ օժիտ: Քեզ՝ որպես իմ ամուսին լքելու, ատելու կամ մեկ ուրիշին քեզնից ավելի սիրելու դեպքում, ես քեզ կտամ 2¹/² մաս ոսկի (մոտ 1 դոլար): Ես կրկնում եմ. 2¹/² արծաթ, 5/10 արծաթի մի մասը, որն ինձ օժիտ էիր տվել: Եթե ես հեռանամ քեզնից, ես կհրաժարվեմ մեր համատեղ ունեցվածքի 1/3-ից:*

Ստացիր վերոհիշյալ տեքստի պատճենը մեկ այլ պապիրուսի վրա, որը կազմել եմ: Ես հաստատում եմ վերը գրված յուրաքանչյուր բառ՝ համապատասխան ներկա փաստաթղթի: Ես կկազմեմ այն 16 վկայի ներկայությամբ: Ես տալիս եմ այն քեզ նշված ամսաթվով, քանի որ չեմ կարող առանց քեզ հետ գրավոր կամ բանավոր բանակցելու մեկ այլ օր նշանակել» (Գրված է Փեթեհարփրեսի կողմից):

Նկ. 3. Ընտանիք Թեբեից (20-րդ դինաստիա)

Տասնվեց վկայի ստորագրություններից միայն հինգն է պահպանվել պապիրուսի հակառակ կողմում: Այս պայմանագրում նշված գումարը, հավանաբար, ամուսնական պայմանագրի մեջ արձանագրվածի մի մասն է:

Ամուսնալուծության դեպքում պայմանագիրն, այսպես ասած, հավաստագիր էր, որ, օրինակ, տվյալ կինը ամուսնալուծված է եւ արդեն կարող է կրկին ամուսնանալ: Մինչեւ մ.թ.ա. 7-րդ դարը պայմանագրերը բանավոր բնույթ էին կրում, բայց Դեմոտիկ գրերի (հին եգիպտերենի ուշ շրջանի գիրը՝ ≈ մ.թ.ա. 7-րդ դար – մ.թ. 5-րդ դար) շնորհիվ դրանք գրի առնվեցին եւ մեզ հնարավորություն տվեցին հստակ պատկերացում ունենալու հին Եգիպտոսի իրավական կյանքի մասին:

Դատական համակարգը բավականին զարգացած էր: Եւ՛ կինը, եւ՛ տղամարդը կարող էին գործ հարուցել դատարանում, հանդես գալ որպես վկա, ինչպես նաեւ՝ որպես դատապարտյալ: Պահպանվել են փաստաթղթեր այն մասին, որ կինն ինչ-որ մեկին կանգնեցնում է դատարանի առաջ այն պատճառով, որ նա իրեն չի վճարել վաճառած գույքի դիմաց:

ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նկ. 4. Ռեդ-ջեդեթ անունով առասպելական կին, որը հղի է եռյակով: Հայրը Ռա ատվածն է: Երեխաներին, որոնց նա սպասում է 5-րդ դինաստիայի առաջին երեք փարավոններն են՝ Ուսերքաֆը, Սահուրան եւ Նեֆերիրքարրան:

Պետք է ասել, որ հին Եգիպտոսում, հազարամյակներ առաջ, խորը գիտելիքներ են ունեցել հղիության, ծննդաբերության, կանացի հիվանդությունների մասին: Կանայք փորձել են պարզել՝ հղի են, թե՞ ոչ, աղջիկ են ունենալու, թե՞ տղա, ինչպե՞ս խուսափել հղիանալուց կամ ընդհատել հղիությունը: Բժշկական պապիրուսներում բազմաթիվ թեսթեր կան պտղաբերության, հղիության եւ դեռ չծնված երեխայի սեռը որոշելու մասին (հաճախ դժվար է տարբերակել պտղաբերության եւ հղիության թեսթերը):

Մեզի միջոցով հղիության թեսթ անելու գաղափարը, որը մինչեւ այսօր կիրառվում է, գալիս է հին եգիպտացիներից: Նման թեսթ պահպանվել է մ.թ.ա. 1350 թ.-ին թվագրվող Քահունի բժշկական պապիրուսում, որը գտնվում է Բեռլինի թանգարանում: Մեզի միջոցով ճշտում էին կինը հղի է թե ոչ, ինչպես նաեւ՝ երեխայի սեռը:

Օրինակ՝ առանձին ամանների մեջ լցնում էին գարի ու ցորեն, որոնց վրա կինը միզում էր ամեն օր: Եթե աճում էր գարին, տղա էր ծնվելու, եթե ցորենը՝ աղջիկ: Իսկ եթե ոչ մեկն էլ չէր աճում, ուրեմն կինը հղի չէր (պապիրուսի որոշ թարգմանություններում նշվում է, որ եթե ո՛չ ցորենը, ո՛չ գարին չեն աճում, ուրեմն կինն ամուլ է): Հին եգիպտերենում էլ է այդպես՝ գարին արական սեռի գոյական է, ցորենը՝ իգական: Կնոջ ամուլ լինել-չլինելը ստուգում էին նաեւ գլուխ սոխի միջոցով: Հետաքրքիր է, որ ձմերուկն էլ էր օգտագործվում այդ նպատակով: Դեռ վաղ ժամանակներից Եգիպտոսում ձմերուկ էր մշակվում, կորիզներից ձեթ էին պատրաստում: Ձմերուկի կորիզներն աղում էին ու խառնում տղա ծննդաբերած կնոջ կաթի հետ: Պատրաստված ըմպելիքը տալիս էին թեսթն անցնող կնոջը խմելու: Խմելուց հետո եթե հետ էր տալիս (փսխում էր), նշանակում էր՝ կհղիանա, իսկ հակառակ դեպքում՝ ոչ:

Նոր թագավորությունից սկսած՝ ծննդաբերության համար հատուկ տեղ էին հատկացնում տան տանիքին կամ այգում, որը կոչվում էր ծնարան: Ծնունդն արագացնելու համար խեժ էին վառում կնոջ որովայնի մոտ, իսկ ցավերը մեղմելու համար որովայնը մերսում էին գարեջրի մեջ թրջած քրքումով:

Ծննդաբերության գործընթացը տեղի էր ունենում կքանստած դիրքով (նկ. 4): Գոյություն ունեին հատուկ անցքով աթոռներ, որոնց միջով պետք է անցներ երեխան, կամ էլ օգտագործում էին 2 մեծ աղյուս, որոնք կոչվում էին «Ծննդաբերության» աղյուսներ: Կնոջ պարանոցից կախում էին գորտի պատկերով թալիսման, որը ծննդաբերության Հեքեթ աստվածուհու խորհրդանիշն էր (նկ. 5.):

Երեխայի ծնվելուց հետո կինն այստեղ մնում էր մեկ կամ երկու շաբաթ, որից հետո միայն կարող էր կրկին դուրս գալ հասարակության մեջ: Այդ ժամանակահատվածը համարվում էր մաքրման ժամանակահատված: «Ծնարանի» պատերը հարդարում էին Թառարեթ եւ Բես աստվածությունների պատկերներով, որոնք նույնպես համարվում էին պտղաբերության հովանավորներ:

Նկ. 5. Հեքեթ – ծննդաբերության եւ պտղաբերության աստվածուհի (գորտի տեսքով)

Նկ. 6. Հաթհոր – երկնքի, պտղաբերության, սիրո, մայրության, երաժշտության, պարի, հաճույքների աստվածուհի

Հազարամյակներ առաջ, ինչպես այսօր, հակաբեղմնավորման տարբեր մեթոդներ եւս կային: Պապիրուսներում հանդիպում են հղիությունն ընդհատելու տարբեր միջոցներ: Օրինակ՝ այրում էին ցորենը, դրանով ծխեցնում կանանց արտաքին սեռական օրգանները, որից հետո բուսական յուղի, նեխուրի եւ քաղցր գարեջրի հավասար քանակությամբ թուրմ էին պատրաստում, որը կինը 4 օր առավոտյան խմում էր: Համարվում էր, որ նեխուրազգիների նաեւ մաղադանոսի մեծ չափաբաժինը հանգեցնում է հղիության ընդհատման: Մաղադանոսից ստացված թուրմով թրջոց էին դնում փորին, այն տաքացնում էր եւ ընդհատում հղիությունը:

Նույն նպատակին էին ծառայում նաեւ ակացիայի խեժից պատրաստված բամբակե գնդիկները (տամպոնները): Ակացիայի ծառն ունի սպերմատոզոիդները ոչնչացնող հատկություն: Եգիպտացիները ակացիայի խեժին խառ-

Նկ. 7. Բես – Մայրերի, երեխաների եւ ծննդաբերության պաշտպան աստվածություն

նում էին թթված կաթ, մեղր, մի պտղունց կաուստիկ սոդա ու ստացված զանգվածով բամբակե գնդիկներ պատրաստում:

Բամբակե գնդիկները պատրաստում էին նաեւ կենդանու կղկղանքից՝ այն խառնելով մեղրի հետ:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակում բամբակե գնդիկները պատրաստվում էին վուշից, որը պատում էին վերը նշված, ինչպես նաեւ մեզից ու խուրմայից պատրաստված քսուքով:

Երեխայի ծնվելուց անմիջապես հետո անուն էին տալիս, քանի որ առանց անվան նա որպես անհատ գոյություն ունենալ չէր կարող: Անունը նաեւ պաշտպանում էր երեխային չար ուժերից:

Չար ուժերից պաշտպանելու համար օգտագործվում էին նաեւ տարբեր թալիսմաններ, արձանիկներ, հմայիլներ: Դրանք պաշտպանում էին լույս աշխարհ գալու եւ հետագա

Նկ. 8. Թաարեթ – պտղաբերության եւ ծննդաբերության աստվածուհի

Նկ. 9. Ծննդաբերերող կին՝ ծնկած երկու աղյուսի վրա

վտանգներից: Այդ թալիսմանները, արձանիկները, պահպանակները հաճախ կրում էին Բես, Թաարեթ եւ Հաթհոր աստվածությունների պատկերները (նկ. 7, 8, 6):

Երեխան դեռ մոր արգանդում համարվում էր ապրող էակ եւ արդեն պաշտպանության կարիք ուներ:

Դժվարին պահերին, ինչպես օրինակ, ծննդաբերության ժամանակ, հատուկ թալիսմանները կրում էին որպես զարդ: Պաշտպանական դեր էին կատարում նաեւ հմայական խոսքերը, որ չար ոգիները գիշերը նորածնին չգողանային:

Հին Եգիպտոսում մեծ էր երեխաների մահացության թիվը: Գիտնականները՝ ելնելով գերեզմանների ուսումնասիրություններից, նշում են, որ երեխաների 20%-ը մահանում էր դեռ չծնված, 20%-ը՝ մեկ տարվա ընթացքում, իսկ 30%-ն ապրում էր ամենաշատը մինչեւ 5 տարի: Կահիրեի օրացույցում երեխա ունենալու համար նշված էին ավելի շատ անհաջող

Նկ. 10. Իսիս աստվածուհին՝
Հորուսին կերակրելիս

օրեր, քան հաջող: Այստեղ, բացի բախտավոր եւ անհաջող օրերից, հաճախ նշվում էր նաեւ երեխայի ծնվելու օրվա առավել հարմար պահը:

Էբերսի բժշկական պապիրուսում (մ.թ.ա. ≈1550թ.) նշվում է, որ եթե ծնվելու ժամանակ երեխան ճչում է «նյա», ուրեմն առողջ բալիկ է, կապրի, իսկ եթե ասում է «մեբի», ցավոք, չի ապրի:

19-րդ դինաստիայի գրագիր Անին գրում է, որ երեխաները պետք է վերադարձնեն իրենց պարտքը մայրերին: «Վճարեք ձեր մայրերին իրենց խնամքի համար: Տվեք նրանց այնքան հաց, ինչքան կարիք ունեն, խնամեք այնպես, ինչպես ձեզ են խնամել, քանի որ դուք ծանր բեռ էիք, երբ նրանք ձեզ կրում էին իրենց մեջ: Եվ երբ վերջապես ծնվել եք, նրանք տարել են ձեզ իրենց ուսերին եւ 3 տարի կերակրել ու լվացել են ձեզ»:

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ՝ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նկ. 11. Ամենհոթեփ 3-րդը եւ Թիա թագուհին (Գիլուկհեփա)

Հայտնի է, որ Եգիպտոսում եւ, ընդհանրապես բոլոր հին ու նոր հասարակություններում, միջպետական ամուսնությունները եղել են արտաքին քաղաքականության շատ կնճռոտ հարցերի կարգավորման միջոց: Այդօրինակ բազմաթիվ վկայություններ կան Ամարնայի (Ախենաթեն փարավոնի կողմից կառուցված մայրաքաղաքը) նամակներում, որոնք համարվում են դիվանագիտական նամակագրության առաջին նմուշները պատմության մեջ: 1887 թվականին գյուղացիների կողմից Ամարնայի ավերակներում գտնված այդ «նամակներն» իրենցից ներկայացնում են կավե սալիկներ՝ հիմնականում գրված աքքադերեն (սեպագիր), որը ժամանակի միջազգային լեզուն էր համարվում:

Կավե սալիկ-նամակները վերաբերում են Նոր թագավորության 18-րդ դինաստիայի ժամանակաշրջանին (մ.թ.ա. ≈1550-1295): Ամարնայի մոտավորապես երեք հարյուր հիսունից ավելի նամակները ոչ միայն անգնահատելի աղբյուր են տվյալ ժամանակաշրջանի պատմության ու ժամանակագրության առումով, այլեւ հանդիսանում են ամուսնությունների միջոցով հին Եգիպտոսի եւ Առաջավոր Ասիայի միջպետական հարաբերությունների կարգավորման մասին մանրամասն տեղեկություններ պարունակող միակ «փաստաթուղթը»:

Եգիպտոսում միջպետական ամուսնությունները կնքվել են հատկապես 18-րդ դինաստիայի ժամանակաշրջանում: Եգիպտոսն օտար տերությունների հետ նախաձեռնում ու բանակցություններ էր վարում, որպեսզի արքայադուստրեր ուղարկվեին Եգիպտոս փարավոնների հետ ամուսնանալու նպատակով: Փարավոնները սովորաբար խնդրանքով դիմում էին այն տերության թագավորին, որի դստերը ցանկանում էին կնության առնել: Նամակները պատկերացում են տալիս նաեւ միջպետական ամուսնությունների հետ կապված խնդիրների լուծման, հսկայական չափերի հասնող թանկարժեք նվերների փոխանակման, թագավորների ապրումների ու համապատասխան ռազմավարության մասին, նույնիսկ պահպանվել է մի արքայադստեր խոսքն ամուսնությունից առաջ: Օրինակ՝ Թութմոս 4-րդը (մ.թ.ա. ≈1401-1391), հայտնի է, որ ամուսնացել է Միտանիի թագավոր Արտատամայի դստեր հետ: Այս փաստն արձանագրված է նրա թոռան՝ Թուշրաթայի Ախենաթենին ուղղված նամակում:

Միաժամանակ, օտար աղբյուրները վկայում են, որ եգիպտական փարավոններն իրենց դուստրերին կնության չեն տվել այլ պետությունների թագավորներին նախ եւ առաջ այն պատճառով, որ դա կնշանակեր փարավոնական տիտղոս տալ այդ թագավորներին, որն անընդունելի էր Եգիպտոսի համար: Կարող էին հասարակ կանանց ուղարկել այնտեղ, հավանաբար, ներկայացնելով, որպես փարավոնական ընտանիքի անդամ:

18-րդ դինաստիայի դիվանագիտական ամուսնություններ կնքող փարավոնը ամենահայտնին Ամենհոթեփ 3-րդն է, որի մասին մանրամասն վկայություններ կան Ամարնայի նամակներում: Միտանիի թագավոր Շութարնա 2-ից խնդրում է նրա դստեր՝ Գիլուհեփայի ձեռքը:

Նամակներում հստակ արձանագրված է, որ Գիլուհեփայի Եգիպտոս ժամանելուց քսան տարի անց, Ամենհոթեփը 3-րդը մտադրվում է կնության առնել Միտանիի եւս մեկ արքայադստեր: Ամենհոթեփ 3-րդը հարսնացուի հետեւից Միտանի է ուղարկում իր դեսպանին՝ Մանեին, խնդրելու Գիլուհեփայի եղբոր՝ Միտանիի թագավոր Թուշրաթայի աղջկա՝ Թադուհեփայի ձեռքը: Պաշտոնապես նրա ձեռքը խնդրելուց եւ համաձայնություն ստանալուց հետո Թադուհեփան արդեն համարվում էր Ամենհոթեփ 3-ի կինը՝ չնայած նրանք երբեւէ դեռ չէին հանդիպել: Հայտնի չէ, թե Մանեն քանի անգամ է ճանապարհվում Միտանի՝ բանակցելու Թուշրաթայի հետ եւ ինչքան ժամանակ է մնում այնտեղ, բայց ի վերջո, երբ Թուշրաթան ստանում է խոստացված բոլոր նվերները, հասնում է այն պահը, երբ Մանեն ուղեւորվում է Թուշրաթայի պալատ՝ Եգիպտոս բերելու արքայադստերը, նրան ուղեկցող 300 անձանց (270 տղամարդ ու 30 կին) եւ, իհարկե, մեծ քանակությամբ հարսանեկան նվերներն ու օժիտը, որոնց ցուցակները նույնպես պահպանվել են Ամարնայի նամակներում: Դրանք ներառում են բրոնզե, արծաթե, ոսկե ամենատարբեր իրեր, ալաբաստրից ու ոսկուց պատրաստված անուշահոտ յուղերի սրվակներ ու սափորիկներ, արծաթե սանրեր եւ այլն, եւ այլն: Վերոհիշյալի ոչ լրիվ թվարկումը կարելի է համարել արքայադստեր օժիտի լոկ նախաբանը, որի մեջ մտնում էին անձնական իրեր, ամանեղեն, անհամար զարդեր, հագուստ, հայելիներ եւ այլն: Թուշրաթայի միակ ցանկությունն ուղարկածի դիմաց մեծ քանակությամբ չմշակված ոսկին էր: Բնականաբար, փարավոնը նաեւ մեծ նվերներ էր ուղարկել, որոնք, Թուշրաթայի խոսքերով, «այնքան շատ էին, որ ծածկում էին գետինն ու հասնում մինչեւ երկինք»: Ամենհոթեփ 3-րդն ուղարկել էր նաեւ մի նամակ, որում ասվում էր, որ իր ուղարկածը չնչին բան է եւ դեռ կտասնապատկի այն, երբ Թուշրաթան ուղարկի իր դստերը

Նկ. 12. Թիա թագուհին

Եգիպտոս: Տասն անգամ ավելին այնքանից, որը Թուշրաթայի համար արդեն համարվում էր «չափից ավելի»:

Ի պատասխան՝ Թուշրաթան նույնպես ուղարկում է նվերներ՝ նախատեսված հատուկ Ամենհոթեփի համար: Ցուցակի առաջին տեղում չորս ձիերն էին՝ կցված ոսկեզօծ կառքին: Հավանաբար ձիերը երկու թագավորների կողմից էլ բարձր էին գնահատվում: Թուշրաթան ուղարկել է նաեւ ձիերի հետ կապված պարագաներ, շքեղ զենքեր՝ մի քանիսը երկաթից (որը շատ հազվադեպ էր այդ ժամանակի համար), այլ ծիսական առարկաներ՝ բոլորը ոսկուց, երբեմն նաեւ՝ արծաթից:

Ամենհոթեփ 3-րդին (Նկ. 13) հաջորդող Ախենաթենը (Ամենհոթեփ 4-րդը), ցանկանալով կնության առնել Բաբելոնի թագավորի դստերը, ուղարկում է նրան նվերների մի հսկայական ցուցակ: Խոսքն ապշեցուցիչ հարստության մասին է: Միայն ոսկե առարկաները կշռում էին 1, 200 մինա (ֆունտ), որն այսօր տասնհինգ միլիոն դոլարից ավելի գումար է կազմում: Այն ոչ թե 1, 200 ֆունտ կշռող ձուլակտոր էր, այլ դրանից պատրաստված հարյուրավոր առարկաներ՝ ոսկյա զարդեր, շքեղ գավաթներ, տարաներ, արկղներ, դանակներ, ինչպես նաեւ խոշոր ոսկեզօծ առարկաներ՝ չորս կառք, երկու մահճակալ, վեց գահ, երեք աթոռ եւ անգամ մեկ նավ, պատրաստված մայրու փայտից եւ ոսկեպատ, ինչպես նաեւ վեց փոքր նավ: Շարունակվում էին տարբեր տեսակի նվերների տեղափոխումը Եգիպտոսից Բաբելոն: Տարբեր տեսակի անոթներ, արծաթյա եւ բրոնզե իրեր, այդ թվում՝ 170 հայելի, 73 ածելի, 92 շերեփ, տարբեր փղոսկրե առարկաներ եւ այլն: Ընդհանուր առմամբ՝ Ախենաթենը Բաբելոն է ուղարկել 3, 300 առարկա:

Ախենաթենն, ի տարբերություն իր հոր, հայտնի էր իր ժլատությամբ: Կարելի ենթադրել, թե այդ դեպքում ինչ քանակությամբ նվերներ է ուղարկել Ամենհոթեփ 3-րդը:

Դիվանագիտական ամուսնություններ կնքվել են նաեւ 19-րդ դիաստիայի օրոք: Պահպանված մի արձանագրությունից հայտնի է, որ Ռամզես 2-րդը խեթերի հետ բարեկամությունն

Նկ. 13. Ամենհոթեփ III

ավելի ամրապնդելու համար իր կառավարման երեսուներե-քերորդ եւ քառասունչորսերորդ տարիներում ամուսնացել է խեթական երկու արքայադուստրերի հետ:

Ըստ Ամարնայի նամակների՝ այրիացած Անխեսենամունը (նկ. 22)՝ վախենալով քրմերի ընդդիմությունից ու գեներալ Հորեմհեբի ազդեցությունից, գրում է Խեթերի Շուփիլուլիումաշ թագավորին՝ առաջարկելով ուղարկել իր տղաներից մեկին՝ որպես իր ամուսին եւ Եգիպտոսի թագավոր: Բայց, ըստ տեղեկությունների, Զանանզաշ անունով արքայազնը հավանաբար գեներալ Հորեմհեբի հրամանով Եգիպտոսի

սահմանին սպանվում է: Սա 18-րդ դինաստիայի դիվանագիտական ամուսնությունների վերջին փորձն է, որը, սակայն, հաջողությամբ չի պսակվել Եգիպտոսի ներսում տեղի ունեցող հակամարտությունների պատճառով:

Դրանից հետո Անխեսենամունին ստիպում են ամուսնանալ Այի (1327-1323) հետ, որն իշխել է ընդամենը մի քանի տարի եւ, որոշ գիտնականների կարծիքով, Նեֆերտիտիի հայրն է:

19-րդ դինաստիայի ամենահայտնի փարավոնը՝ Ռամզես 2-րդը, նույնպես ամուսնացել է օտարերկրյա արքայադուստրերի հետ: Վաթսունն անց տարիքում նա կնության է առնում խեթակա թագավոր Հաթուշիլիշի աղջկան, իսկ մի քանի տարի անց, կնքվում է ամուսնություն վերջինիս մյուս աղջկա հետ: Վերոհիշյալների մասին հավաստի տեղեկություններ կան եւ՛ եգիպտական, եւ՛ սեպագիր աղբյուրներում: Իր երկարամյա կյանքի ընթացքում Ռամզես 2-րդը կնության է առնում Բաբելոնի ու Հյուսիսային Սիրիայի երկու արքայադուստրերի:

Ամարնայի նամակներից պարզորոշ երեւում է, որ օտարերկրյա արքայադուստրերը երբեք առաջին տիկնոջ դերում չեն հայտնվել, միշտ եղել են երկրորդական դերում: Բացառություն են կազմում միայն Միտանիի մի քանի արքայադուստրերը:

Մյուս կողմից կարծիք կա նաեւ, որ դիվանագիտական ամուսնությունների արդյունքում ծնված երեխաներն ավելի հաճախ էին գահը ժառանգում, քան մյուս երեխաները: Այս ձեւով գահը ժառանգած փարավոնները շարունակում էին դիվանագիտական հարաբերություններ պահպանել այն պետությունների հետ, որոնք համարվում էին իրենց մոր հայրենիքը, մանավանդ, որ կարող էին խոսել երկու լեզվով՝ եւ՛ մոր, եւ՛ հոր:



Նկ. 14. Թուշրաթա
թագավորի նամակը՝ Ամենհոթեփ
3-րդին (Ամարնա)

ԱՐՅՈՒՆԱԿՑԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅՏՆԻ ՓԱՐԱՎՈՆՆԵՐ

Հին Եգիպտոսում արյունակցական ամուսնություններն օրենքով չէին դատապարտվում, ընդհակառակը՝ դրանք շատ ընդունված էին հատկապես փարավոնական ընտանիքներում: Ամուսնանում էին հիմնականում քույրերի հետ, երբեմն նաեւ՝ դուստրերի:

Արյունակցական ամուսնություններն իրենց դրսեւորումներն են գտել դեռեւս հին եգիպտական կրոնում. մեծ թվով աստվածներ միաժամանակ եւ՛ քույր ու եղբայր են, եւ՛ ամուսիններ (օրինակ՝ Օսիրիսն ու Իսիսը, Սեթն ու Նեֆթիսը եւ այլն):

Ըստ որոշ գիտնականների՝ փարավոններն ամուսնանում էին իրենց քույրերի կամ դուստրերի հետ՝ փարավոնական արյունն անաղարտ պահելու, ինչպես նաեւ իշխանությունն ընտանեկան նեղ շրջանակներում պահպանելու նպատակով (մի գուցե նաեւ այն նկատառումից ելնելով, որ ժառանգականությունը փոխանցվում էր մայրական գծով, ինչպես պնդում է Գ. Ռոբինսը): Արյունակցական, մասնավորապես քույր ու եղբոր միջեւ կնքվող ամուսնությունները լայն տարածում են ստանում հատկապես Պտղոմեանների ժամանակ:

Հասարակ ընտանիքներում հարազատների միջեւ ամուսնությունը խիստ հազվադեպ էր: Բայց կան բավականին վկայություններ խորթ քույր ու եղբոր միջեւ կայացած ամուսնությունների մասին:

Ախենաթեն (Ամենհոթեփ IV մ.թ.ա. ≈ 1352-1336)

Թագադրվել է որպես Նեֆերխեփերեւրա Ուաենրա (Neferkheperura Waenra)

Նկ. 15. Ախենաթենը սֆինքսի տեսքով

Ամենհոթեփ 4-րդը Նոր թագավորության 18-րդ դինաստիայի տասներորդ փարավոնն էր՝ Ամենհոթեփ 3-րդ փարավոնի եւ Թիա թագուհու որդին, որի գահակալական անունը Նեֆերխեփերուրա էր (թարգմանաբար նշանակում է Ռա աստծո փոխակերպումը կատարյալ է): Նրա անունը պատմության մեջ մտել է նախ եւ առաջ որպես հին եգիպտական բազմաստվածությունը հերքող ու միաստվածություն դավանող փարավոն, որի համար հաճախ նրան հերետիկոս են անվանել: Հորից հետո գահը ժառանգելու առաջին տարում նա կառուցեց հսկայական տաճար Կարնակում, որը նվիրված էր ոչ թե Ամունին, այլ Աթենին՝ արեւի սկավառակին՝ հիմնելով նոր դարաշրջանի՝ միաստվածության սկիզբը: Այսպիսով, նա համարվում է առաջինը մարդկության պատմության մեջ, որ առաջ է քաշել միաստվածության գաղափարը:

Ամենհոթեփ 4-րդը Ամունի պաշտամունքի փոխարեն առաջ քաշելով Աթենի՝ որպես գլխավոր եւ միակ աստծո գաղափարը, իր կառավարման հինգերորդ տարում Ամենհոթեփ (Ամունը գոհ է) անունը փոխարինեց Ախենաթեն (Աթենի

կենդանի կերպար) անունով: Հարկ է նշել անչափ ուշագրավ մի փաստ՝ 19-րդ դարի վերջին հայտնի եգիպտագետ Ֆ. Պետրին իր աշխատություններից մեկում նշում է, որ Ախենաթենի մայրը, որը Միտանիի (ԱՐՄԵՆԻԱ) արքայադուստր էր, բերել է Աթենի ուսմունքը եւ սովորեցրել իր որդուն՝ Ամենհոթեփ 4-րդին: Պետրին հենց այդպես էլ նշում է «Mitanni (Armenia)»:

Նկ. 16. Ախենաթենը, Նեֆերտիտին եւ նրանց երեխաները

Տաճարներում եւ դամբարաններում հաճախ կարելի է տեսնել արքայական ընտանիքի անդամներին (Ախենաթենն ու Նեֆերտիտին իրենց երեխաների հետ)՝ պատկերված Աթեն աստծուն երկրպագելիս եւ զոհ մատուցելիս, որտեղ Աթենը ներկայանում է որպես ձեռքերը ճառագայթաձեւ մեկնած արեգակի սկավառակ, որոնք ավարտվում են Ուաս կոչվող արքայական գավազանի կամ Անխի (կյանք) նշաններով՝ համապատասխանաբար խորհրդանշելով իշխանությունն ու կյանքը:

Քրմերի ընդդիմությունն Աթենի գերիշխանությանը ստիպեց Ախենաթենին իր թագավորության վեցերորդ տարում միջին Եգիպտոսում հիմնել նոր մայրաքաղաք՝ Ախեթաթեն (Աթենի հորիզոն) անունով, որն այսօր հայտնի է որպես էլ-Ամարնա: Քաղաքի անունը հայտնի է քաղաքի սահմանաբաժան քարերից: Ախենաթենը նոր հիմնված մայրաքաղաքում ապրում էր իր կնոջ՝ Նեֆերտիտիի եւ վեց դուստրերի հետ (համարվում է, որ նրա միակ որդու՝ Թութանխամունի մայրը ոչ առաջնային կանանցից մեկն էր՝ Կիա անունով): Հայտնի է, որ Ախենաթենն ավելի ուշ կնության է առել նաեւ իր ավագ դստերը՝ Մերիթաթենին (նկ. 17):

Մերժելով եգիպտական պանթեոնի բոլոր աստվածներին ու աստվածուհիներին՝ իր գահակալության իններորդ տարում հրամայում է փակել նրանց նվիրված բոլոր տաճարները, եւ վերացնել Ամունի անունն ու պատկերները:

Նա նոր քրմեր ու պաշտոնյաներ է նշանակում, ստեղծում է նոր կառավարություն, որը ենթակա էր միմիայն իր անձին: Հին եգիպտացիների համար կրոնական այսպիսի հալածանքներն անընդունելի էին. նրանք պատրաստ չէին միաստվածություն դավանելու: Նրանց համար ավելի հեշտ էր պանթեոնում նոր աստվածություններ ավելացնել:

Նրա որդի Թութանխաթենը (մ.թ.ա. ≈ 1336-1327) գահ բարձրանալով՝ մայրաքաղաքը տեղափոխեց Մեմֆիս եւ իր անունը դարձրեց Թութանխամուն, այսինքն՝ վերջ դրվեց Աթենի միանձնյա տիրապետությանը: Ախենաթենը չի ունեցել մեծ թվով գաղափարակիցներ՝ հետեւորդներ ու աշակերտներ, որոնք շարունակեին իր գործը, քանի որ այն կարծիքին էր, որ միայն ինքն է լավ ճանաչում Աթեն աստծուն եւ կենտրոնացել էր միայն իր անձի վրա:

Ախենաթենը, ճիշտ է, ավելի հայտնի է որպես կրոնական հեղաշրջում կատարած փարավոն, բայց նրա օրոք բարձր մակարդակի են հասնում նաեւ դիվանագիտական հարաբերությունները, որոնց մասին վկայում են նրա հիմնած քաղաքի տարածքից 19-րդ դարում գտնված դիվանագիտական նամակները:

Նկ. 17. Մերիթաթեն

Էլ-Ամարնայի արեւելքում Ախենաթենը սկսել է իր համար կառուցել դամբարան, որն ավարտին չի հասցրել, եւ այսօր հայտնի չէ, թե որտեղ են Ախենաթենի եւ նրա հարազատների մարմինները: Ենթադրվում է, որ նա թաղվել է Ամարնայում, բայց Թութանխամունի ժամանակ քրմերը մարմինը տեղափոխել են Թեբե:

Նկ. 18. Ախենաթենի երկու դուստրերը

Նկ. 19. Ախենաթենի կամ Նեֆերտիտիի գլխաքանդակ

Թութանխամուն (Թութանխաթեն) մ.թ.ա. ≈ 1336-1327

Թագադրվել է որպես Նեբխեփերուրա (Nebkheperura)



Նկ. 20. Թութանխամուն

Նկ. 21. Թութանխամունի գահը

Չնայած տասնութերորդ դինաստիայի տասնմեկերորդ փարավոն Թութանխամունի շքեղ դամբարանին՝ նա շարունակում է մնալ շատ հանելուկային կերպար: Դատելով նրա մումիայից՝ նա մահացել է պատանի հասակում՝ մոտավորապես 17-19 տարեկանում, եւ կառավարել է ընդամենը 8-9 տարի:



Նկ. 22. Անխեսենփաաթեն (Անխեսենփաամուն)

Հավանաբար ծնվել է Ախեթաթեն (էլ-Ամարնա) քաղաքում: Նրա մայրը համարվում է Ախենաթենի ոչ առաջնային կանանցից մեկը՝ Կիան: Նեֆերտիտին եւ Ախենաթենը համատեղ ունեցել են միայն վեց դուստր: Գահի բարձրանալով՝ նա արքայական նստավայրը տեղափոխում է Մեմֆիս եւ նորից բազմաստվածություն է հաստատում: Իր Թութանխաթեն անունը (Աթենի կենդանի պատկեր) դարձնում է Թութանխամուն (Ամունի կենդանի պատկեր):

Նրա դամբարանում գտնված ոսկե գահի վրա փորագրված տեքստը ցույց է տալիս, որ Թութանխամունի կինը Ախենաթենի եւ Նեֆերտիտիի դուստր Անխեսենփաաթենն է, այսինքն՝ իր քույրը (գահի վրա, արձանագրության մեջ նրանց անուններն արդեն փոխված են՝ Թութանխամուն եւ Անխեսենփաամուն): Անխեսենփաաթենը Ախենաթենի եւ Նեֆերտիտիի երրորդ դուստրն է, որը ծնվել է հոր թագավորության ութերորդ տարում: Ասվածից կարելի է ենթադրել, որ նա չէր կարող լինել ավելի քան տաս տարեկան: Ինչպես հայտնի է, Թութանխամունն էլ դեռ երեխա էր, հետեւաբար կար մեկը, ով օգնում էր «երեխաներին» երկիրը կառավարելու գործերում: Այդ մարդը, հավանաբար, Այ անունով մեկն էր, ով Թութանխամունի մահից հետո ամուսնանում է Անխեսենփաամունի հետ:

Մինչեւ Հովարդ Քարթերի կողմից (1874-1939) Թութանխամունի դամբարանի հայտնագործումը, վերջինիս մասին շատ քիչ բան էր հայտնի, սակայն դրանից հետո նա դարձավ հին Եգիպտոսի ամենահայտնի փարավոնը:

Անգլիացի հնագետ եւ եգիպտագետ Հովարդ Քարթերը գրում է, որ նպատակն էր Եգիպտոսում գտնել որեւէ արժեքավոր բան, բայց չէր սպասում, որ նման բան կգտնի: 1922 թվականի նոյեմբերի 26-ին Քարթերը եւ պեղումների հովանավոր Ջորջ Հերբերտը՝ կոմս Քարնարվոն 5-րդը, կանգնած էին Թագավորների հովտի դամարաններից մեկի ոչնչով աչքի չընկնող դռան առջեւ: Քարթերը ձախ կողմից զգուշորեն բացում է կնքված դուռը եւ լամպի լույսի տակ փորձում է ինչ-որ բան տեսնել: Երբ աչքերը սովորում են մթությանը, նա ապշում է եւ մի որոշ ժամանակ չի կարողանում խոսել: Քարնարվոնի այն հարցին, թե արդյո՞ք ինչ-որ բան տեսնում է, նա պատասխանում է. «Հրաշալի բաներ...»:

Չնայած մասամբ կողոպտված լինելուն, թաղման պարագաները, այդ թվում՝ ներքին դագաղներն ու սարկոֆագը, գտնվել են գերազանց վիճակում: Այն համարվում է ամենալավ պահպանված փարավոնական դամբարանը, որը Արքաների հովտի մյուս դամբարաններից տարբերվում է նաեւ իր ճարտարապետությամբ՝ բաղկացած լինելով ոչ թե 18-20-րդ

դինաստիաներին բնորոշ երկար միջանցքից, այլ՝ չորս շատ փոքր սենյակներից: Դամբարանում գտնվել են մեծ քանակությամբ գանձեր՝ թաղման պարագաներ, պահապան արձաններ, կահույք, զենքեր, երաժշտական նվագարաններ, Թութանխամունի հետմահու ոսկե դիմակը, աճյունատուփ, Թութանխամունին պատկերող արձանիկներ, գահեր, սանդալներ, մահճակալներ, աթոռներ եւ շատ այլ թանկարժեք իրեր: Դիմակն, անկասկած, ամենահայտնի դարձած իրն է, որ գտնվել է դամբարանում: Այն դրված է Թութանխամունի երրորդ՝ ամենաներքին դագաղում՝ մումիայի գլխի վրա: Դիմակն ունի մոտավորապես 54 սմ բարձրություն եւ կշռում է ավելի քան 10 կգ, պատրաստված է ոսկու երկու շերտից՝ ներզարդված գունավոր ապակիներով ու կիսաթանկարժեք քարերով: Դիմակի վրա Թութանխամունը պատկերված է Օսիրիսի տեսքով: Նա Նեմես կոչվող գլխի փաթաթանով է, որը հետեւից ոլորակապով իջնում է մեջքի վրա՝ ներդրված անթափանց կապույտ ապակիով (լաջվարդի նմանակում): Դիմակի ճակատամասում նստած են Վերին ու Ներքին Եգիպտոսները խորհրդանշող անգղն (Նեխբեթ) ու կոբրան (Ուաջեթ): Բացի փարավոնական իշխանության, աստվածային ուժի խորհրդանիշ լինելուց, կոչված էր փարավոնի թշնամիների վրա կրակ թքել՝ պաշտպանելու նպատակով: Անգղն ու կոբրան պատրաստված են ոսկուց՝ ներդրված կապույտ հախճապակով, ապակով, սերդոլիկով ու լաջվարդով: Կոբրայի աչքերը լեռնային ապակուց են (անգղի աչքերը բացակայում են): Փարավոնի աչքերը լեռնային ապակուց ու վանակատից են: Ինչպես դագաղների վրա, դիմակի վրա էլ աչքերը եզրագծված են հին Եգիպտոսում աչքի համար կիրառվող երկու ամենահիմնական ներկանյութերից մեկի՝ գալենայի (պատրաստվել է կապարի հանքաքարի հիման վրա) փոխարինող լաջվարդով: Աստվածներին բնորոշ մորուքը նույնպես ոսկուց է, որն ամրացված է կզակին: Դիմակի հետեւի մասում փորագրված են մի քանի հմայական տեքստեր՝ Մեռյալների գրքից:

Հատկապես ուշագրավ է մոտավորապես 2 մ բարձրություն ունեցող ոսկեզօծ աճյունատուփը, որի մեջ պահվել են երիտասարդ փարավոնի զմռսված ներքին օրգանները: Աճյու-

նատուփի չորս կողմից, ձեռքերը աջ ու ձախ պարզած, չորս պահապան աստվածուհիների՝ Իսիսի, Նեֆթիսի, Նայթի եւ Սելքիսի ոսկեջրված փայտե արձանիկներն են: Աճյունատուփի խոռոչներում մարդակերպ կափարիչներով չորս սափորներ են, որոնք պատկերում են փարավոնին նեմես գլխանոցով, ճակատին՝ անգղն ու կոբրան: Յուրաքանչյուր սափորի վրա փորագրված է այն աստվածության անունը, որի հետ նույնացվում էր փարավոնի տվյալ ներքին օրգանը. Իմսեթին կոչված էր պաշտպանելու լյարդը, Հափին՝ թոքը, Դոամութեֆը՝ ստամոքսը, իսկ Քեբհսենոեֆը՝ աղիքները, որպես Հորուսի չորս որդիներ:

Հին Եգիպտոսում, ինչպես եւ, ընդհանրապես, հին աշխարհում, աթոռը եղել է իշխանության, ուժի, ազդեցության, հեղինակության խորհրդանիշ եւ Քարթերի, Քարնարվոնի ու մյուսների համար զարմանալի չէր դամբարանում վեց աթոռի առկայությունը: Քարնարվոնի խոսքերով՝ կահույքի երբեւէ հայտնագործված ամենահիասքանչ նմուշներից մեկը Թութանխամունի դամբարանի այսպես կոչված Ոսկե գահն է, որը գտնվել է սեւ վուշի կտորի մեջ փաթաթված: Իրականում գահը փայտե բազկաթոռ է՝ ներզարդված ոսկու ու արծաթի շերտերով, ինչպես նաեւ դամբարանում գտնված իրերին բնորոշ գունավոր ապակիներով, հախճապակիով ու կիսաթանկարժեք քարերով: Բազկաթոռի աչքի ընկնող հատվածը թիկնակն է, ուր պատկերված է երիտասարդ թագուհին՝ Անխեսենփաաթենը, արեգակի սկավառակի՝ Աթենի ճառագայթների ներքո ամուսնու մարմինն անուշահոտությամբ օծելիս: Գահի ոտքերը կենդանակերպ են, դիմացից՝ երկու ոտքերի վերին մասում, ամրացված է առյուծի երկու գլուխ:

Գահի երկու կողմից պատկերված են թեւավոր կոբրաներ, որոնք կրում են Վերին եւ Ներքին Եգիպտոսների թագերը (Նկ. 21): Մեծ է Թութանխամունի դամբարանից գտնված գանձերի թիվը, որոնք հնարավորություն են տալիս լավ պատկերացում կազմել Հին Եգիպտոսի եւ հատկապես Նոր թագավորության ժամանակաշրջանի կյանքի տարբեր բնագավառների մասին:

Թութանխամունի մահվան պատճառների մասին կան ամենատարբեր կարծիքներ: Վերջին վարկածներից են մալարիան ու ոտքի՝ ծնկից վերեւ, կոտրվածքը, որի թարախակալումը կարող էր խորացնել հիվանդությունն ու մահվան պատճառ դառնալ:

Նկ. 23. Հիվանդ Թութանխամունը հենակով: Անխեսենփաաթենը Մանդրագորի (մարդախոտ) բույսով փորձում է ուժ տալ ամուսնուն:

Ամենավերջին վարկածներից է այն, որ Թութանխամունի ժառանգական հիվանդությունների պատճառ կարող էր դառնալ նրա ծնողների քույր-եղբայր լինելը:

Նրա մումիան պահվում է այնտեղ, որտեղից գտնվել է, այսինքն՝ Թագավորների հովտում՝ իր KV 62 դամբարանում:

Նկ. 24. Թութանխամունի գլուխը

Ռամզես 2-րդ մ.թ.ա. 1279-1213

Նկ. 25. Ռամզես 2-րդը երեխա ժամանակ:

19-րդ դինաստիայի ամենահայտնի փարավոնը՝ Ռամզես 2-րդը, նույնպես զերծ չի մնացել արյունակցական ամուսնություններից: Նա ունեցել է մի քանի գլխավոր կին, որոնցից առնվազն չորսն իր դուստրերն են եղել, օր.՝ Մերիթամենը (նկ. 26):

Նկ. 26. Մերիթամեն

Ռամզես 2-րդի գլխավոր կանանցից ամենահայտնին Նեֆերթարին էր: Ռամզես 2-րդը հիմնում է նոր մայրաքաղաք՝ Փիրամեսսե անվամբ (Քանթիր), որտեղ ժամանակին հայրը՝ Սեթի I-ը, դղյակ էր կառուցել, ու ընտանիքով հաստատվում է այնտեղ:

Նրա օրոք կառուցված ամենանշանավոր ճարտարապետական կոթողները Աբու Սիմբելի հայտնի ժայռափոր տաճարներն են, որոնցից փոքրը նվիրել է իր ամենասիրելի կնոջը՝ Նեֆերթարիին:

Ռամզես 2-րդի կառավարման ժամանակաշրջանում Եգիպտոսի գլխավոր հակառակորդը Խեթական պետությունն էր, առանցքային քաղաքը՝ Քադեշը, որի շուրջ ծավալվում էին հիմնական մարտական գործողությունները: Հայտնի ճակատամարտը տեղի է ունեցել մ.թ.ա. 1274 թվականին՝ Օրոնտես գետի ափին: Այն աշխարհում առաջին ճակատամարտն է, որը մանրամասնորեն նկարագրվել է: Անցել է երեք փուլով: Երկուստեք կորուստներից ու հաջողություններից հետո, մ.թ.ա. 1259 թվականին հաշտության պայմանագիր է կնքվում Խեթական պետության ու Եգիպտոսի միջև, որոնց պատճեններն արձանագրված են Կարնակի տաճարի վրա:

Նկ. 27. Աբու Սիմբել՝ փոքր տաճար

Ռամզեսի դամբարանը (KV 7) գտնվել է Արքաների հովտում, իսկ մարմինը՝ Դեյր էլ-Բահրիի մումիաների գաղտնարանում (բացվել է 1881 թվականին): Այստեղ գտնվել են շատ փարավոնների ու քրմերի՝ Ահմոս I, Ամենհոթեփ I, Թութմոս I եւ II եւ մի շարք այլ մումիաներ, որոնք բերվել են Թագավորների հովտից: Կարծիք կա, որ նրանց այս գաղտնի դամբարան են տեղափոխել 21-րդ դինաստիայի քրմերը պղծումից ու կողոպուտից զերծ պահելու համար: Ռամզես 2-րդի ծաղկեպսակներով փաթաթված մումիան դրված է եղել մայրու փայտից պատրաստված դագաղի մեջ: Ռամզես 2-րդի մումիայի մազերը կարմիր են, որը, հավանաբար, զմռսման արդյունք է: Մումիայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ռամզես 2-րդը ժամանակին հիվանդացել է ջրծաղիկով: Դատելով մումիայից՝ հասակը մոտավորապես 1,80 մ է: Քիթն ազնվականի է, հոնքերը դուրս ցցված են, թարթիչները՝ հաստ, ծնոտն՝ ամուր, իսկ ականջները՝ կլոր: Նրա մկանները տարիների ընթացքում քայքայվել են, նա տառապել է աթերոսկլերոզ հիվանդությամբ, մահացել է 90 տարին արդեն բոլորած: Ռամզես 2-րդի մումիան այսօր պահվում է Կահիրեի Եգիպտական թանգարանում:

Նկ. 28. Ռամզես 2-րդ

ԸՆՏԱՆԻՔԻ, ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՍՏՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՍՏՎԱԾՈՒՀԻՆԵՐ

Նկ. 29. Օսիրիս (մեջտեղում), Իսիս (նրանից ձախ) եւ Հորուս (նրանից աջ)՝ աստվածային եռյակ եւ աստվածային ընտանիք

ԻՍԻՍ



Աստվածուհի, որն իր մեջ ներառում է մոր եւ կնոջ բոլոր առաքինությունները: Նա միաժամանակ Օսիրիսի քույրն ու կինն էր եւ Հորուսի մայրը: Իսիսի հիերոգլիֆային անունը նշանակում է գահ եւ ինքն էլ պատկերվում է գլխին դրված գահով: Իսիսը համարվում էր թագավորական իշխանության աստվածուհին ու փարավոնի մայր պաշտպանը: Նոր թագավորությունից սկսած (մ.թ.ա. ≈ 1550-1069)՝ նրա դերն ընդլայնվում է որպես փարավոնի մայր: Հայտնի է, որ փարավոններն իրենց նույնացնում էին աստվածների հետ: Հաճախ Իսիսը պատկերված է փարավոնին կրծքով կերակրելիս: Այս առումներով Իսիսը նույնացվում էր Հաթհոր աստվածուհու հետ եւ հաճախ պատկերվում էր կովի գլխով կամ կովի պոզերի միջեւ շրջափակված արեգակի սկավառակով:

ՀԱԹՀՈՐ

Հաթհորը հնագույն կարեւոր աստվածուհիներից է, որի անունը նշանակում է «Հորուսի տուն»: Նա բազմակողմանի աստվածուհի է, ընդունվում է որպես պտղաբերության, սիրո, երաժշտության, հաճույքների աստվածուհի: Հանդես է գալիս կնոջ մարմնով եւ արեգակի կովի պոզերով շրջափակված սկավառակով: Համարվում է արեւի Ռա աստծո դուստրը: Նա համարվում էր նաեւ թագավորների աստվածային մայրը եւ փարավոնների տիտղոսներից մեկը հենց այդպես էլ կոչվում էր՝ «Հաթհորի որդի»:

Հին եգիպտացիները հավատում էին, որ Հաթհորը այն ասվածուհիներից է, որոնք նախորոշում են նորածնի ճակատագիրը:

Հաթհորի պաշտամունքի կարեւոր կենտրոն էր Մեմֆիսը, որտեղ նա պատկերված էր որպես «մոլաթգենու տիկին»: Դեռ Հին թագավորության ժամանակ նրա պաշտամունքի գլխավոր կենտրոնը Դենդարան էր, որտեղ պահպանվել է եռյակին՝ Հաթհորին, Հորուսին ու երաժշտության աստված Իհիին նվիրված հունահռոմեական շրջանում կառուցված տաճարը:

ԽՆՈՒՄ



Եգիպտոսի ամենահին աստվածներից մեկն է՝ մարդու մարմնով ու խոյի գլխով, կապվում է Նեղոսի ակունքների եւ նրա արգասաբերության հետ: Նա հիմնականում պատկերված է մարդկանց դուրգի անիվի վրա արարելիս:

Հաճախ ներկայացվում է գորտի գլխով մանկաբարձուհի Հեքեթ աստվածուհու ուղեկցությամբ, որը շունչ է փչում մարդկային մարմինների մեջ: Համարվում է, որ նա է արարել վաղընջական ձուն, որից աշխարհաստեղծման ժամանակ դուրս է եկել արեւը:

ՀԵՔԵԹ



Հղիության, ծննդաբերության, պտղաբերության աստվածուհի. պատկերվում է գորտի տեսքով, համարվում է Խնում աստծո կողակիցը: Նա էր շունչ փչում Խնումի կողմից ստեղծած էակների մեջ:

ԲԵՍ

Բեսի անունը հավանաբար «բեսա» բառից է, որը նշանակում է պաշտպանել: Բես աստվածությունը, որպես չար ուժերի դեմ մոգական պաշտպան, երկրպագում էին հին Եգիպտոսի բոլոր խավերը: Նա հովանավորում էր հատկապես երեխաներին ու հղի կանանց եւ հաճախ պատկերվում էր Թառարեթի կողքին:

Եգիպտացիները հավատում էին, որ Բեսը պաշտպանում է նաեւ օձերից: Այդ իսկ պատճառով նա հաճախ պատկերվում էր թունավոր օձեր բռնած կամ դրանց խփելիս: Իր այս դրսեւորմամբ Բեսը նույնացվում կամ մարմնավորում էր վիշապ Ահային, որն իր մերկ ձեռքերով խեղդում էր օձերին:

ՄԻՆ



Պտղաբերություն ու վերարտադրողականություն խորհրդանշող հնագույն աստվածներից մեկը: Նա պատկերվում է տղամարդու տեսքով՝ ամուր փաթաթված կտավե կտորով, որը նրան մումիայի տեսք է տալիս: Նա, Խնում աստծո նման, նույնպես համարվել է աստվածների ու մարդկանց արարողը: Վերջինիս խորհրդանիշը համարվել է հազար բույսը, հավանաբար, տեսքի ու մեջը պարունակվող կաթնանման հեղուկի համար, որը նույնացվել է սերմնահյութի հետ:

ԲԱՍԹԵԹ



Պատկերվում է կատվի տեսքով կամ կատվի գլխով ու կնոջ մարմնով: Նրա պաշտամունքի կենտրոնը Բուբասթիս քաղաքն էր: Նա կապվում էր առյուծ-աստվածուհի Սեխմեթի հետ եւ նրա նման հաճախ պատկերվում էր էգ առյուծի տեսքով՝ պաշտպանելով փարավոններին ճակատամարտերում: Նա կապվում էր նաեւ Հաթհորի, Մութի եւ Թեֆնութի հետ եւ համարվում էր Աթում աստծո դուստրը: Համարվում էր հղիության եւ ծննդուղի հովանավոր: Հույները նրան նույնացնում են իրենց Արտեմիսի հետ:

ՄԵՍԽԵՆԵԹ



Ծննդաբերության աստվածուհի, որը յուրաքանչյուր երեխայի ծնվելու պահին՝ իր շնչով կենսական ուժ էր փչում երեխաների մարմնի մեջ: Նա համարվում է կքանստած ձեւով աղյուսների վրա ծննդաբերելու աստվածուհին:

ԹՍՈՍՐԵԹ

Թառարեթը հղիության եւ ծննդաբերության աստվածուհի է, սովորաբար պատկերվում է որպես երկոտանի էգ գետաձի՝ կանացի կախված կրծքերով, կատվային վերջույթներով, հղի կնոջ որովայնով ու Նեղոսի կոկորդիլոսի մեջքով, ձեռքը դրված «sa» կոչվող հիերոգլիֆի վրա, որը խորհրդանշում է պաշտպանություն: Պաշտպանում է կանանց ծննդաբերության ժամանակ:

Գրականության ցանկ

1. Allam S. Women as owners of immuvables, //Lesko B. S. (ed.), Women's earliest from ancient Egypt and Western Asia, Atlanta, Georgia: Scholars Press, 1989, pp. 123-135.
2. Breasted J. H. A History of Egypt, Hodder and Soughton Limited, London, 1905.
3. Brier B. Hobbs H. Daily life of the ancient Egyptians, Greenwood Publishing Group, 2008.
4. Carter H. Mace A. C. The Discovery of the Tomb of Tutankhamen, Dover Publications, 1977.
5. Cottrell L. Life under the Pharaohs, Pan Books, London, 1957.
6. Hart G. The Routledge Dictionary of Egyptian Gods and Goddesses, Routledge, 2005.
7. Janssen J. J. Pestman P. W. Burial and inheritance in the community of the necropolis workmen at Thebes, JESHO, 1968, No. 11, pp. 137-170.
8. Lichtheim M. Ancient Egyptian literature: a book of readings, University of California Press, 1976.
9. Manniche, L. An Ancient Egyptian Herbal, The American University in Cairo Press, 2006
10. Marriage and the Standing of Women, http://www.touregypt.net/historicalessays/lifeinegypt8.htm, 21.11.2014.
11. Meskell L. Private life in New Kingdom, Egypt, Princeton University Press, 2002.
12. Pestman P. W. Marriage and matrimonial property in ancient Egypt, Brill Publications, Leiden, 1961.
13. Podany A. H. Brotherhood of Kings, Oxford University Press, 2010.
14. Redford D. B. The Oxford Encyclopedia of ancient Egypt, Oxford University Press, 2001.
15. Reeves N. The Complete Tutankhamun, Thames and Hudson, London, 1990.
16. Reeves N. Wilkinson R. H. The Complete Valley of the Kings, Thames and Hudson, London, 1996.
17. Robins G. Women in ancient Egypt. British Museum Press, 1993.
18. Romer J. Ancient lives: The story of the pharaoh's tombmakers, Phoenix Press, 2003.
19. Schulman A. R. Diplomatic Marriage in the Egyptian New Kingdon, Journal of Near Eastern Studies 38(3): 177-193, 1979.
20. Seidel M. Schulz R. Egypt: Art & Architecture, Könemann, Germany, 2005.
21. Shaw I. Nicholson P. Dictionary of Ancient Egypt, The British Museum; 2002.
22. Simpson W. K. Polygamy in Egypt in the Middle Kingdom, JEA, 1974, vol. 60, pp. 100-105.
23. Slandering Tutankhamun? Al-Ahram Weekly, 2014, http://weekly.ahram.org.eg/News/7610/47/Slandering-Tutankhamun-.aspx, 27.11.2014.
24. Spiegelberg W. Papyrus Libbey. An Egyptian Marriage Contract, Publication of the Toledo Museum of Art, Toledo, 1907:
25. Tyldesley J. Daughters of Isis: women of ancient Egypt, Penguin Books, 1995.
26. Ward W. A. The Egyptian Economy and Non-royal Women: Their Status in Public Life, 2001, http://www.stoa.org/diotima/essays/wardlect.shtml, 08.09.2014.
27. Watterson B. Women in ancient Egypt, Stroud, Gloucestershire N. Y.: St. Martin's Press, 1991.
28. Watterson B., The Egyptians, Blackwell, Oxford, 1997.